ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 1-ԻՆ ՏԵՍԱԿԻ ՀԱՑԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՊՁԲ-20/1

ք.Երևան

«01» «հունիսի» 2020թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, (գործելով Հայաստանի Հանրապետության անունից), ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամը, ի դեմս գլխավոր տնօրեն Էմին Մարտիրոսյանի (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 24.01.2020թ.. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՊՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.8 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով Պայմանագրի N1 հավելվածի՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի «Ծանոթություն» մասի 2-րդ նախադասությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկները 01.06.2020թ.-ից անցել են սննդի հատկացման նոր համակարգի՝ պատրաստի սննդի ձեռքբերման ծառայության (ներառյալ հացը), ուստի անհրաժեշտություն է առաջացել նվազեցնել մատակարավող հացի քանակը և Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով, նախատեսված հացի այն քանակը, որը մինչև 01.06.2020թ.-ը չի մատակարարվել, ամբողջությամբ նվազեցնել, մասնավորապես՝

1) 50000 կգ «Հաց (1-ին տեսակի ցորենի ալյուրից)» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 3585 կգ-ով, որի գումարը կազմում է՝ 1183050 (մեկ միլիոն հարյուր ութսուներեք հազար հիսուն) ՀՀ դրամ:

Հաշվի առնելով այն համգամանքը, որ նվազեցվող քանակների չափով վերացել է «Հաց (1-ին տեսակի ցորենի ալյուրից)» ապրանքատեսակի գնման պահանջն, ուստի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կատարել ֆինանսական հատկացումների նվազեցում և այդ գումարի չափով նվազեցնել Պայմանագրի գինը:

1.2 Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պայմանագրի գինը՝ կազմում 15316950 (տասնհինգ միլիոն երեք հարյուր տասնվեց հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը»:

1.3 Պայմանագրի N1 հավելվածի՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի, 1-ին չափաբաժնի աղյուսակը հաստատել նոր խմբագրությամբ, առանց տեխնիկական բնութագրի սյունակի (որը մնում է ամփոփոխ)՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

1.4 Պայմանագրի N2 հավելվածը՝ «վճարման ժամանակացույց»-ը, հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N2-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՊՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և N1, N2 հավելվածները կազմված են 4 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 և N2 հավելվածները, համարվում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ղեկավարություն՝
Ա. Լազարյան

/ստորագրություն/
Կ.S.

ՎԱՃԱՌՈՂ

«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ
ք. Երևան, Վ.Սարգսյանի-3
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շենգավիթի մ/ճ
Հ/Հ 163018140422
ՀՎՀՀ 02560711
Գլխավոր տնօրեն՝
Է.Մարտիրոսյան

/ստորագրություն/
Կ.S

Հավելված N 1
« 01 » « 06 » 2020թ. կնքված
N 1 Համաձայնագրի
«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՊՁԲ-20/1» ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատակարարման		
							հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	15811100/1	Հաց (1-ին տեսակի ցորենի ալյուրից)	կգ	330	15316950	46415	ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներ	46415	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 01.06.2020թ.

ԳՆՈՐԴ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայություն՝
Ա.Ղազարյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ
ք. Երևան, Վ.Սարգսյանի-3
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շենգավիթի մ/ճ
Հ/Հ 163018140422
ՀՎՀՀ 02560711
Գլխավոր տնօրեն՝
Է.Մարտիրոսյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 01 » « 06 » 2020 թ. կնքված
N 1 Համաձայնագրի
«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՊՁԲ-20/1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում				
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	ընդամենը
1	15811100/1	Հաց (1-ին տեսակի ցորենի ալյուրից)	8250000	15316950	15316950	15316950	15316950

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 900011175016
ՀԱՎՀՀ 02204739
ՔԿ ծառայության
Ա.Յաղուբյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ
ք. Երևան, Վ.Սարգսյանի-3
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շենգավիթի մ/ճ
Հ/Հ 163018140422
ՀՎՀՀ 02560711
Գլխավոր տնօրեն՝
Է.Մարտիրոսյան
/ստորագրություն/
Կ.Տ